Խմբային աշխատանք՝ «Կերպարային քարտ» մեթոդով

Դ. Վարուժանի «Հարճը» պոեմի կերպարները

Հեղինակ՝ Անահիտ Հովհաննիսյան

«Կերպարային քարտ» մեթոդի նպատակը, նկարագրությունը

«Կերպարային քարտ» մեթոդի կիրառմամբ կարելի է խթանել աշակերտի վերլուծական-քննական մտածողությունը, զարգացնել կերպարների միջև համեմատական զուգահեռներ տանելու հմտությունը, ինչպես նաև քննել և դիտարկել կերպարը բեկումնային դեպքերից ***առաջ*** և ***հետո*** ժամանակատարածային կտրվածքով: Աշակերտը արտահայտում է

ինքնուրույն դատողություններ հարցի շուրջ, կերպարի հանդեպ ձևավորում անհատական վերաբերմունք։

«Կերպարային քարտում» աշակերտները ձևակերպում են գրական երկի կերպարը բացահայտող հարցադրումներ այնպես, որ ներկայացվեն կերպարների արտաքին հատկանիշները, ներաշխարհի խմորումները, հուզական վիճակները, արարքների դրդապատճառները, կրած փոփոխությունները։

«Կերպարային քարտ» ստեղծելու քայլերը

- Ուսուցիչը աշակերտներին բաժանում է խմբերի և յուրաքանչյուր խմբի հանձնարարում ստեղծել մեկ կերպարային քարտ՝ ընտրելով տվյալ ստեղծագործության կա'մ առանցքային հերոսի, կա'մ երկրորդական։
- Խմբերը ներկայացնում են կերպարին ***Առաջ և Հետո*** մոտեցմամբ։
- Սկզբում քարտը բաժանում են 2 մասի՝ ***Առաջ*** և ***Հետո,*** այնուհետև ընտրում են կերպարի արտաքինին համապատասխան նկարներ և զետեղում քարտի համապատասխան մասերում։
- Կերպարի նկարի ներքևում սեղմ վերաշարադրում են սյուժեի այն դրվագները, որոնք բացահայտում են կերպարին բեկումնային դեպքերից ***առաջ*** և ***հետո***՝ տալով նրա վերաբերյալ սեղմ տեղեկույթ։ Բացահայտում են կերպարի արարքները, բնութագրում նրա արտաքին հատկանիշները, ներկայացնում ներաշխարհի ապրումները։
- Սյուժեն շարադրում են այնպես, ասես թե զրուցում են կերպարի հետ՝ նրան դիմելով «Դուք»-ով։ Սա աշխուժացնում է պատումի ոճը, հնարավորություն տալիս աշակերտին պատմելուն զուգահեռ անել մեկնաբանություններ։
- Վերոբերյալը շարադրելիս կիրառում են տեքստային մեջբերումներ՝ ասվածը հիմնավորելու համար։

- Քարտի ներքևում գրում են կերպարի բազմակողմանի և խորքային վերլուծությանը միտված հարցադրումներ։ Հարցերը նույնպես պետք է ձևակերպել երկրորդ դեմքով։

«Կերպարային քարտը» կիրառելու քայլերը

- Խմբերը իրենց կերպարային քարտերը ստեղծելուց հետո անցնում են քննարկման փուլին։
- Բակուրի «կերպարային քարտ» ստեղծած խումբը դասարանին ներկայացնում է սյուժի սեղմ վերաշարադրանքը, իսկ հետո իր կազմած հարցերի միջոցով զարգացնում կերպարի վերլուծությունը։
- Ուսուցիչը կարող է վարվել իր հայեցողությամբ և պահանջել, որ խումբը Բակուրի կերպարը բացահայտող հարցերը ուղղի Տրդատի կերպարը ներկայացնող խմբին, իսկ վերջիններս էլ իրենց հարցերը կուղղեն Նազենիկի կերպարը ներկայացնող խմբին։

Խմբեր	Կերպարներ
	Նազենիկ
	Տրդատ
	Բակուր

Կերպարային քարտի մեկ օրինակ

Առաջ **Հետո**

Դուք Սյունյաց Բակուր նահապետն եք:

Սյունյաց ապարանքում կազմակերպել եք խրախճանք իշխանների, ճորտերի, չքնաղագեղ կանանց ընկերակցությամբ.

-Գարնանամուտ երեկո մ'իր պալատին մեջ մարմար,
Բակուր, Սյունյաց նահապետ, շքեղ հանդես մը կու տար...

Ձեր պերճաշուք ապարանքում «հայկազուն Մեծամեծների» շարքում հյուրընկալվել է Բագրատունի Տրդատը.

-Տրդա'տ, այս գիշեր քուկդ է իմ տուն.
Մտի'ր սրահը տոնին, թող իրարու դեմ փշրին
Մեր բաժակներն, ու մեր սերը մկրտե թող գինին:

Ճորտերը, բդեշխները, ազատանին քաջարի **«դեմ հանդիման բազմեր են, բայց ո՛չ իրենց մեծանուն Աստճանին համեմատ, այլ սուրերու մեծության»:**

Ու խնջույքի թունդ պահին «լույսերու հոծ ծովուն մեջ» վարձակը ձեր Նազենիկ, որին նիզակով էիք շահել երկարատև պայքարում, կովախնձոր դարձավ ձեր ու Տրդատի միջև.

Չինավառ ձիավորների հետ հետապնդում եք Տրդատին և Նազենիկին՝ լցված անգութ ատելությամբ և «արյամբ ոխերիմ».

-Բակուր մեջտեղն էր անոնց՝ աշտանակած ահեղ ձին,
Կուգար լուծել իշխանեն վրեժ, պատժել հարճն անխիղճ՝
Մորթելով հոն՝ փոխանակ զայն փրկելու աղծապիղծ:

Անկարող եք հանդուրժել ձեր հանդեպ երախտամոռ գտնված հյուրի պահվածքը, զայրագնած ու մոլեգին պատրաստ եք պատառ-պատառ անելու երկուսին էլ. վրեժի գեհենը այրում է ձեր հոգին: Ու այն պահին, երբ սիրահար զույգն արդեն հատում էր սահմանը Շիրակի, խոլ կատաղությամբ արձակեցիք ձեր նետը սուրսայրի ու ժահրահոտ, որ **«մխվեցավ վարձակին ծոծրակին մեջ լուսաբուխ»:**

Կույր մոլուցքին գերի՝ այդպես էլ չիմացաք, որ խոցեցիք ու փշրեցիք «դաշնակության ու գեղի աստվածակերտը գոհար»:

Առաջ

-Նահապետն ալ վեր ցատկեց տեղեն իբրև քանասար.
Գնաց, որ հարձն ազատե, ջախջախե գլուխն Ասպետին,
Որ կինն իր տան մեջ կլլկեր՝ իբր իր ողկույզն իր տաշտին։

Հարցեր

1.Ինչպե՞ս կբնութագրեք Ձեր միջավայրի վարքն ու բարքը և ժամանակաշրջանի պատկերը։
2.Որտե՞ղ եք տեսնում ձեր հեթանոս մեծության հզորությունը։
3.Ինչպիսի՞ դրամատիկ ապրումներ ու լարվածության զգացում ունեցաք, երբ տեսաք, որ Նազենիկն ինքնաբուխ տրվում է Տրդատին։
4. Ինչու՞ չէր կարող Տրդատը տիրել Նազենիկին. չէ՞որ ինքներդ էլ մի օր ձեր հաղթ բազուկի զորությամբ տիրացաք նրան։
5.Ինչու՞ ձեր զգացմունքը Նազենիկի հանդեպ կարելի է որակել կիրք, բայց ոչ երբեք սեր։

Հետո

Հարցեր

1.Ներկայացրե՛ք ձեր ներաշխարհի փոթորկումները, երբ պարզեցիք, որ Նազենիկն ու Տրդատը փախել են միասին։

2.Ի՞նչ փոխվեց ձեր մեջ Նազենիկի հանդեպ։

3.Ի՞նչ կլիներ, եթե հասնեիք փախչող զույգին։

4.Վերջիվերջո դուք չհասաք նրանց, հետևաբար ինչու՞ չընդունել, որ հեթանոս ժամանակներին համահունչ, ազատ սերը հաղթելու իրավունք ունի։

5.Ի՞նչ տարբերություն կա ձեր և Տրդատի միջև, որ Նազենիկն ընտրեց նրան։

Հուշում

Բոլոր հարցերին պատասխանելիս պարտադիր է առաջնորդվել տեքստով, բերել տեքստային մեջբերումներ՝ ասվածը հիմնավորելու համար, ընդգծել վարուժանական առնական խոսքի ուժը փաստող բառեր, արտահայտություններ։